

ղութիւնը՝ այն երկնային ու փրկաւտ
Վրիստոսի պարգևն որ ժամանակը ցամ-
քեցուց, նորէն ու ժ առնէ*) : Լ, երկա-
րատե տրամուծեան ամպէն ու շատ ա-
տենէ ՚ի վեր տարածայնութեան սև ու
տաղտկալի մշուշէն ետքը՝ ծագի ամենուս
ուզած միութեան արշալոյսը**):

Այս պիտոր ըլլայ ուրախարար պտու-
ղը օրհնութեան, որով Վրիստոս մեր
ամենուս Տէրն և Փրկիչը իր ամբիծ ու
սիրելի հարսը ուղղափառ Լ, կեղեցին
պիտոր միսիթարէ, ու անոր արցունքնե-
րը պիտոր սրբէ ու ցամքեցնէ աս տառա-
պանաց ատենները : Ընանկ որ՝ ամեն
բաժանմունք մէջերնէս բոլորովին վեր-
նալով, մեր առաջուց տարածայնեալ
բարբառները կատարելապէս միաբանե-
լով օրհնենք ՚ի միասին զՎատուած որ
չուզէր մէջերնիս հերձուած ըլլալը այլ
Վաւթերոյն բերնովը կը պատուիրէ, "զի
զնոյն բան ունիցիմք ամենեքեան հաստա-
տեալք ՚ի նոյն միտս և ՚ի նոյն հանձարու,
ու մշտնջենաւոր գոհութիւն ողորմու-
թեանց շօրը մատուցանեն ամեն իր
սրբերը, մանաւանդ նախնի փառաւո-
րեալ Հաբք և վարդապետք Մրեւելեան
Լ, կեղեցեաց, տեսնելով երկնքէն այս
Վաւթելապետական ակթոռոյն հետ՝ որ
կաթուղիկէ ճշմարտուէն ու միութեան

կեղբունն է՝ նորագուելն ու նորէն հաս-
տատուելը այն կցորդութեան, որնոր ի-
րենք երկրիս վրայ եղած ատենին ամեն
ջանքով ու անխնջ աշխատանքք հոգ տա-
րին տածելու օրէ օր ամիացնելու, թէ
վարդապետութեամբ և թէ օրինակաւ.
Հոգին սուրբ սրտերնուն մէջ տիւաժ
ըլլալով Վրիստոսի սէրը՝ որ բաժանման
միջնորամբ քակեց, ու իր արեամբը ա-
մենքը միաբանեց ու հաշտեցուց, և ու-
ղեց որ իւր աշկերանները մէկ սիրտ ու
մէկ հոգի ըլլան, ասանկ տարալծեց աս
հայր : "Այ վասն նոցա միայն տղաչեմ,
այլ և վասն ամենայն հաւատացելոց, զի
իցեն մի որպէս և մէք մի եմք" : Եւ մէկ

Ի հարգատան կաթողիկոսարանի Հայոց ուղղափա-
ռաց, ի Պերսի. Պոլսոյ

Մխալքալար : - Մխալքալարէն կը հա-
ղորդեն մեզ, թէ անցեալ փետր. ամսոյ
27 ին՝ Սրբոց Սարգանանց տօնախմբու-
թեան օրը, ՚ի Հայկական Ընթերցարա-
նի***) արգոյ բաժանորդաց տնօրէնու-
թեամբ տեղւոյն Մրժան. Տէր Ստեփան
նու Մազ քահանայն Տէմիրձօղլեանց՝
առաւօտուն ՚ի ս. Լ, կեղեցին հանդիսա-
ւոր ս. Պատարագ մատուցանելով և ար-
ժանաւոր պաշտօն կատարելով ՚ի միշ-
տակ Մղգային քաջ նահատակացն Սրբոց
Սարգանանց, ասրս համայն հոգևորա-
կան գասը ուղղակի ՚ի Հայկական Ընթեր-

*) Սուրբ Բարսեղ Խոսրով Հ. առ դամասոս Պատր.
**) Վճիռք Փրկնատեան սուրբ Ժողով ի կենդա-
կի Եւզինեաց ՚ի ցնծացնէն : Տուեալ ի Հոսով ի
գուան սրբոյն Գետրոսի 18 սեպտեմբերի 1868 ամի.
ի քան և երրորդ ամի քահանայապետութեան մե-
րոյ :

* Տակալին ՚ի Հայկական Ընթերցարանի վերա-
բերեալ որպէսի և իցէ խնդր և կանոնադրութիւն
ներկայացած չէ նորին ղեհասիրտութեան Ս. Կա-
թողիկոսի ամենոյն Հայոց :

ցարանը, կերթան, ուր բացի Ռնթեր-
ցարանի 35 բաժանորդաց, և Հայոց ե-
րևելիք, և ոմանք ՚ի գլխաւորացն ար-
հեստաւորաց ներկայ եղած են :

Աւր և ՚ի կողմանէ բաժանորդաց Ռն-
թերցարանին նախաձաշի վայելուչ սեղան
մի պատրաստուած ինելով, համայն հան-
դիսականք՝ պ. Գասպար Շահ պարոն-
եանցի մի գեղեցիկ ճառը մտիկ անելէ
զկնի կը հրաւիրուին սեղանը, յորում
ևս պ. Յարութիւն Յարութիւնեանցը
մի համառօտ բայց ազդու ուղերձ խօ-
սելով, յետոյ բաժակներ կառաջարկուին
յկեցցէս աղաղակօք, և կը բարեմաղ-
թէն օգոստ. յայսեր կենաց երկարու-
թիւն, և Ղզգիս Հայոց լուսաւորու-
թիւն և յառաջագիմութիւն մեծարելով
միանգամայն յրբոց յարգանանց արժա-
նաւոր յիշատակը :

Նամակագիրը Մխալքալաքի Հայ Ժո-
ղովրդեան կողմանէ երախտագիտական
զգացմամբք մեծ շնորհակալութիւն կը
յայտնէ առ Ղզգասէր այրն՝ մեծապա-
տիւ Պ. Յովնանեանց, որոյ Ղզգա-
սիրական առատաձեռնութենց արդիւն-
քը ուրիշ առաւել յարմար միջոցի կը
թողումք լրագրոյս միջոցաւ մեր Ղզ-
գայնոց հաղորդելու՝ յուրախութիւն և
՚ի միթարութիւն :

Ինչպէս կը կամէինք նամակը և յի-
շեալ հանդիսին կարգացուած ճառը և
խօսուած ուղերձը հրատարակել, բայց
ամսագրոյս թերթերուն անձկութիւնը
չ'ներեց :

ՄԱՀԱՅՈՒՅԱԿ

Ղաքէլական Ս. Լ. Թողոյս միաբան
Ժերուհի Յովնէի վարդապետ Բժըշ-
կեան՝ կարճատե հիւանդութեամբ՝
անցեալ մարտ ամսոյ 27 ին ընդ արշա-
լոյս՝ իւր մահկանացու կենաց ընթացքը
կնքեց ՚ի հասակի 69 ամաց, Լ. 28 ին.
կէսօրուան մօտ՝ հանդիսաւոր յու-
ղարկաւորութեամբ՝ Ս. Լ. Թողոյս
Սիաբանից գերեզմանատունը ամփո-
փեցաւ մարմինը :

Ղյս առթիւ սիրելի է մեզ յայտ-
նել, որ լուսահոգին իւր քաղցրաբա-
լոյ և խոհեմ վարուք՝ մեր համայն ս-
Սիաբանութեան սիրալիր համակրու-
թեան և յարգանաց արժանացած էր :

Վաջահմուտ էր մեր Վկեղեցական
շարականաց և ամենայն երգեցողու-
թեանց, և յայտոսիկ կողմանս գտան-
վող հոգևորական դասուց մէջ առա-
ջին կը համարուէր :

Մարտ 30՝ դատաւորի կիւրակէին՝
զկնի սրբոյ պատարագի՝ Նորին Ս. Եհս-
իառութիւն Ս. Սիմոնիկոսը՝ հանդերձ
ուխտիւք Ս. Վկեղեցոյ պաշտօն կա-
տարեց վասն հոգւոյ յիշեալ հանգու-
ցելոյն :

<p>Հին — Վախիճեանէն և Մտրախանէն դպրոցաց վերաբերեալ նամակներ ընդունած եմք. բայց սակայն ներկայ ամագրոյս մէջ տեղի չունենալով մայիս</p>	<p>ամուսնացեալ թողուլ հարկադրեալ եմք : Նոյնպէս և Ս անական դպրոցաց իս նոնադրութիւնը , զոր Ուսումնական () անձնատոճովը արդէն աւարտած է :</p>
---	--

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մտրախան ներկայ թերթիւ աւարտելով առաջին միամեայ շրջանը՝ կը փութայ իւր խորին շնորհակալութիւնը յայտնել համայն բաժանորդաց և միանգամայն խոստովանել , որ՝ թէպէտ նոյն շրջանին մէջ ըստ արժանւոյն վսեմ և կարի հետաքրքրական նիւթերով չկարողացաւ պսակել իւր սիրելի որդւոց սւ բաժանորդաց ակնկալութիւնը , բայց անշուշտ է , թէ՛ այսպիսի ակամայ պակասութեանց պատճառները բազմաց քաջածանօթ լինելով , բոլորովին ներողամտութենէ չը պիտի զուրկ մնայ :

Ս ան զի ամենայն ձեռնարկութիւնք , ուր և երբ սկզբնաւորին , առանց շատ կամ սակաւ թերութեան չունին լինել . և անհնարին է առանց չգոնէ մի քանի ժամանակ շարունակութեան և փորձառութեան՝ իւր կատարելութիւնը ըստ ամենայնի ստանալ :

Յայտնի բան է , որ տպագրական գեղեցկութեան համար ևս պէտք է Տպարանը ըստ բաւականին ունենայ ներքին պիտոյքը , այս է՝ զարդուց և տառից և այլոց հարստութիւն , արհեստին հմտագոյն վարպետներ , որք առաջին կարելութեանք կը համարին տպագրութեան մաքրութիւնը և գեղեցկութիւնը փայլեցնելու :

Մտր ինքնին կը հետեւի , եթէ Մտրախան ո՛չ միայն փորձառութեան կը կարօտէր իւր նիւթերը պիտանի և բազմահաճոյ ընծայեցընել , այլ և Ս . Մտրոց տպարանի վիճակը որ ո՛չ գոհացուցիչ գրութեան մէջ էր ՚ի մասին ամենայն կարևոր պարագայից , ըստ կարելւոյն բարւոքել , և որ առաւել մեծն է , մի ամենաչնչին պէտքը լրացնելոյ համար , ասկանամեծ դժուարութեան կը հանդիպի՝ տեղւոյն զրկեց աղագաւ . ուրեմն բնական էր թէ՛ իւր նոր շրջանը չէր կարելի անշուշտ ունենալ ըստ ամենայնի կատարելութիւն :

Իայց և այնպէս Մտրախան հարազատ և սիրելի որդւոց Հայրենասէր ու բարեզգաց մասըներողամտութեամբ նկատելով այսպիսի ակամայ պակասութիւնքը ,